



Շուրջը նայեցաւ, որպէսզի վստահ ըլլայ, որ որեւէ մէկը չի տեսներ, Մովսէս յարձակեցաւ ծառային անխիղճ տիրոջ վրայ: Կռուի ընթացքին Մովսէս սպաննեց եգիպտացին: Անոր մարմինը շուտով թաղեցին:




3

Յաջորդ օրը, Մովսէս տեսաւ, որ երկու հրեաներ կը կռուին: Ան փորձեց անոնց կասեցնել: Մէկը ըսաւ. "ինձի՞ ալ պիտի մեռցնես, ինչպէս որ եգիպտացիին մեռցուցիր": Մովսէս շատ վախցաւ: Ամեն մարդ գիտեր երեկուան մասին: Փառաւունս ալ գիտեր: Մովսէս պետք էր, որ փախչէր: Ան Միտեայ կոչուող երկիրը գնաց:



4

Մինչ Մովսէս կը հանգչէր ջրհորին մօտ, Միտիանի քահանային եօթը աղջիկները դոյլերը կը լեցնէին ջուրով իրենց հօր հոտին համար:




5

Ուրիշ հովիւներ փորձեցին անոնց կողմ քաշել: Մովսէս պաշտպանեց եւ օգնեց կիներուն:



6

"Շուտ տուն դարձաք", Ռաֆուէլի, աղջիկներուն հայրը զարմանքով հարցուց: Երբ աղջիկները բացատրեցին պատճառը, ան ըսաւ. "Յոս քերէք այդ մարդը": Մովսէս ապրեցաւ Ռաֆուէլի հետ, որ ճէրօ կը



7

կոչուէր: Յետոյ Մովսէս ամուսնացաւ Ռաֆուէլի անդրանիկ աղջկան հետ:

Եգիպտոսի մէջ, փառաւուն մահացաւ: Աստուծոյ ժողովուրդը, հրեաները, տակաւին ծառաներ էին:




8

Անոց իրենց
տանջանքներուն մէջ կը
ճմլուէին: Սաստիկ ձեռով
կ'աղօթէին Աստուծոյ
օգնութեան համար:
Աստուած լսեց
անոց աղօթքները:




Մովսէս լուր չունէր, սակայն
Աստուած կը ծրագրէր, զինք
թագաւոր հռչակել, օգնելու
գերի իրեաներ: Քառասուն
տարի անցան Մովսէսի
Եփայտոսէն հեռանալուն:
Ան Ռաֆուէլի հովին էր:
Բայց շատ կը կարօտնար




իր ժողովուրդին
Եփայտոսի մէջ:

Օրին մէկը մօտերը Մովսէս թուփ
մը նկատեց, որ կրակ առած
կ'այրէր: Սակայն կրակը
թափով չէր այրէր: Մովսէս
որոշեց գիտնալ անոր
պատճառը:



Երբ Մովսէս կը մօտենար, Աստուած զինք
կանչեց թուփին մէջէն: "Մովսէս": "Ես հոս
եմ" ըսաւ Մովսէս "Շատ մի մօտենար", ըսաւ
Աստուած: "Ոտնամաններդ հանէ, որովհետեւ
հողը, որուն վրայ ես, սուրբ գետին է":



"Ես քեզի փառաւունին պիտի դրկեմ, որ
իմ ժողովուրդս Եփայտոսէն դուրս բերես",
ըսաւ Աստուած: Բայց Մովսէս կը վախնար
հոն երթալ:



Ետքը Աստուած Մովսէսի ցոյց տուաւ
իր հօր ուժը: Ան Մովսէսին
ցուպը օձի վերածեց:



Երբ Մովսեսն օձը վերցուց պոչէն, օձը անգամ մը եւս ցուպ դարձաւ: Աստուած ուրիշ կշան մըն ալ տուաւ:




"Կուրծքիդ դիր երկու ձեռքերդ": Ան հրամայեց: Մովսես այդպէս ըրաւ: Իր ձեռքերը ճերմակ բորոտներու վերածուեցան:



Երբ նորէն կրկնեց, անոր ձեռքերը բժշկուեցան:




Տակաւին Մովսես արարկեց: "Ես լաւ չեմ խօսիր", ան ըսաւ Աստուծոյ: Աստուած զայրացաւ: "Ես Ահարոն քու եղբայրդ պիտի օգտագործեմ, որպէսզի քու ըսելիք խօսքերդ խօսի", ըսաւ ան:



Մովսես ճեղրոյին դարձաւ, հաւաքեց առարկաները եւ Եգիպտոս մեկնեցաւ:



Աստուած առաջնորդեց Մովսեսին եղբայրը Ահարոն, որպէսզի հանդիպի Մովսեսին, լերան վրայ: Մովսես Ահարոնի պատմեց ամեն ինչ, որ Աստուած որոշած էր հրեայ ժողովուրդը դուրս հանելու Եգիպտոսէն:



Միասին անոնք լուրը փոխանցեցին հրեայ առաջնորդներուն: Երբ Մովսէս ցոյց տուաւ նշանները ծերերուն: Անոնք գիտցան, որ Աստուած պիտի օգնէ իրենց: Միասին, խոնարհեցան պաշտելու:



21

Մովսէս եւ Ահարոն գաղտնօրէն զացին փառաւոնին. Աստուած կ'ըսէ. "Ձգէ՛ իմ ժողովուրդս թող երթայ ազատ", անոնք ըսին անոր:



22

"Ես չեմ ձգեր, որ Իսրայէլ երթայ", պատասխանեց փառաւոն: Ան չէր ենթարկուեր Աստուծոյ:



23

Աստուած իր հզօր ուժը պիտի օգտագործէր փոխելու համար փառաւոնին միտքը:



24

Իշխանը հովիւ կը դառնայ


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ելից 2 - 5

"Զու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

25



10



60 26

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզը կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16